

ՍՈՒՐԲ Էջմիածնի ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆ-ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏՊԱՐԱՆԸ*

Վարպետների մեջ էլ, ինչպես երևում է, անհամաձայնություն է տեղի ունենում և մեծ վարպետը պահանջ է դնում փոքր վարպետին արձակել, որպեսզի ինքը կարողանա գործը գլուխ հանել և լավ թուղթ տալ: Կաթողիկոսը համաձայնվում է, արձակում է փոքրին և Պողիս վերադարձնում: Դորանցից մետք մեծ վարպետը նոր պահանջ է դնում, որ վեց տարվա պայման կապեն և վարձը տան, իրեն գործը վերջացնելու համար: Բայց կաթողիկոսը

* Օարունակված «Էջմիածն» աժամագի 1972 թվականի №№ Դ—Ե-ից:

1775 ի Ծիրազ՝ առ Մամիան Էմինը վասն թղթաշին:

«Թույլ մի ևս առ Մամիան Էմինն գրեաց: Որում և ծանուց զգրելն առ տեղույն նոխրակ Սունկանուու և Աւետիք վարդապետուն վասն թղթաշինի: Եւ վուսույն նոցա լինաց առ նա զի տացէ: նոցա և ի նոցան: Բարցեալ իմասցի զրաբեսն թղթաշինին. զի թէ նորա ըստ պատուիքի իրու գրուաշեն պատրաստեալ ևն քերել ընդ իրենան, բարի է: Եւ եթէ ոչ՝ զիւր խոստացեալ թղթաշինն լանձնեացէ: նոցա առ ի քերել ի սուրբ Աքոռու»:

Անդ, էջ 326

Ի Կարս առ Ազի փաշայն, առ Երրամիմ Աֆանտին և առ յալլս: Խնդիր վասն թղթաշեն ֆունկացն. զի րիսեն ի սուրբ Աքոռու:

Թույլ սիրոյ առ Կարսայ Ազի փաշայն գրեաց (որ ի յօդուու. ԺԶ(16) լիշեցեալ ի) յորմէ և խնդրեաց, զի վասն թղթաշինացն զոր ինչ գրեալ է Երրամիմ Աֆանտուն, այսպէս արասցէ: Որում և թճայ ևս լինաց, որ էր Դ(4) լուղա զարպապ, Է(7) սպիտուկ մոմ, Բ(2) նոխա վարդաշուր և փոքր ինչ միրզ: Թույլ սիրոյ ևս առ Երրամիմ Աֆանտին (որ ի բանվ. ԺԶ(16) լիշեցալ) փուստլայ մի ևս գրեաց առ նա վասն թղթաշինացն: Զի արգ արարեալ փաշային լին տացէ զնոսա ի սուրբ Աքոռու:

Անդ, էջ 329

«Թույլ ևս առ Երրամիմ Աֆանտու Վերիախարճ պարուն Գլորցն գրեաց ի պատսախանի թղթայն, (որ ի լիվ. ԺԶ(16) լիշեցեալ է.) որ զրաբեսն թղթաշինացն գրեալ էր որրազան Վերին, պատուել՝ զի թէ նորա թղթաշենը իցեն, ի ձեռն Աֆանտուն մուրախաս առնել տացէ: Խոչ թէ փաշայն շառուցու զնոսա, ինքն այսքան Շ(50) խարճի տացէ: նոցա: Զորս և ի սէր ունիցի: Բայց յատոյ մեր Գևորգին պատուիքնաց ասել նմա, զի այսքան (1) խարճի տացէ: նոցա»:

Անդ, էջ 330

«Վասն թղթաշինութեան գործեացն նաստ և մեծ փայտը պիտոյացան և յերկրոջ մերում ըստ այնքանութեան փայտը ոչ գտանեցան: Եւ լուար թէ՝ ի մայրին Բամբականորու նաստ և մեծ փայտը շատ գոն: Վասն որոյ և սրբազն Վերին զրոյաշինացն ընդ մեր միրզային եղեալ լինաց ան, զի երթեալ տեսնեն զփայտն և որոց նաւանեացին, Եշանադրեալ, ցուցացիցն արանցն մերոց, զի նաւանալ քերցեն: Որոց աղազաւ առ Բարքելգը՝ Դամիուչին և Մամիան աղայն ուրոյն ուրոյն զերիս թուղթս լանձնարարութեան գրեաց վասն թղթաշինացն, զի ի երթեալ նոցա ան, ի սէր ունիցին զնոսա, և բանից նոցա ձեռնուու լիցին: Որք նին ի մարտի ԽԸ(28):»

Անդ, 330

«Շանուց և. զգալն (Զաքիլինց Գրիգոր աղային) թղթաշինացն ի ս. Աքոռու: Որք ի վնասով. ԺԳ(13) նեխալ մտին աստ: Եւ թէ որպէս էին նեխալ և յօսմանցուց երկրոշն զի՞նչ պատուինալ նոցա և որքան մարտաֆ եղեալ վասն նոցա, զամենն մի ընդ միջուկ լսու գրել

պահանջում է դեռևս յոր շնորհը ցուց տալ: Նրանց միտքն էր մի կերպ վողերն առանալ և ապա փախչել: Նրանք սկսում են միևնույն ժամանակ մեծամեծ ծախքեր անել տալ և դժվար պահանջներ դնել, որպես թե գործի հաջողութան համար: Սիմեոն Կայողիկոսը նրանց բոլոր պահանջներին էլ բավարարություն է տալիս: Երկու տարի անցնում է, սակայն գործը մի քայլ

խոսուաւ և օմաւ Եւ բարոր միում ի մէջ խօսից Եմարց սրբազն Վեճն թղթաշխացն, թէ որպէս և ի հաջ պարմանա եկիք: Ասացին թէ բաց ի անապարհի մասրաֆեն Գ(3) տարի մնամք առա, տարին մեկին Բազար դուռ վարձ լինի: Զայս ևս ծանոյց նմա»:

Անդ. Էջ 869

Թղթաշխանքը տեսան ծաները և նեկան պատմեցին. «Համա որոյ և սրբազն Վեճն զխաշատոր վարդան առաքեաց անդ. զի գիտայտս թերցէ ի ս. Աթոռու: Որոյ աղազա և Բարարէգին՝ Շամիլուն Մահմատ Ալային և Մելիք Շաքրարօյին գԴ(4) թուղթս գրեաց: Խողոքով ի նոցամէ՝ զի ի հատանելմ և ընթել Խաչատոր Վարդապետին գիտայտս ի սուրբ Աթոռու, ըստ ամենայնի մուղայթ և ձեռնուու լիցին բանիցն նորա: Եւ ընդ թղթոյն Ա(1) խառայ Կապայ վասն Բարարէգին լինաց սրբազն Վեճն, Գ(3) մատոդ Կապայ վասն Օսբրոյին»:

Անդ. Էջ 875

1778 նոյն. 18 ի Պօլիս, ի Կարին և ի Կարս թուղթը, ընդ թղթաշէն փոքր ֆուանկին: «Եսկ և ըստ որում ասացաւ, յամույս ԺԱ(11) թղթաշէն ֆուանկը, տակալին զլա իմ բույթ ու համեմին, զի և մեր միամտէար և որախամայար: Ուստի՝ ի մեծ տարակուանն կալով մեր, ստիպէաց զնոսա միջու, զի թէ զլա յուղթս Բանել գիտեն, Բանցեն, ապա թէ ոչ, տացեն մեզ ստոյդ իմն պատախանան: Եսկ փոքր թղթաշէն ֆուանկը, որի անոնն էր Մուսի Պէջար, զոր և Ցովիսանէն կոչէին, դեռ մինչն ցարդ մեզ ոչ պիտոյացաւ: Քանզի՝ զորշաւուոնն համայն պարագայիշը մնե թղթաշէնը՝ որ Մուսի Բէյօս՝ Յովսէփ ևս կոչիր, շինցուցավ ի գումա երեր, ցուցանուով զշափսն և զձևսն, և յօրինելով զամենան լոյժ հաստագոյն»:

Եսկ փոքր ամենին բանի իմիք չախտոյացաւ, զի ասէին թէ սա միայն լաւ յուղթ համել գիտէ, և յորմ մենք եկին առա, մինչ ցայժմ կայր պարապ և դատարիկ: Եսկ յորժամ յուղթ Բանելոյ համանակն եկն, յայնծամ բաց ի յու Բանելոյն զլա յուղթ, պասաւ ևս մեծան զմտութեամք Վարիլ առ ընկերն՝ և առ թարշիմանն հիրեանց, որ և եղ ի մոտ գնալ յերկիր ինը և ոչ ես Բանցսուութիւն ընկերացն, տասուկացուցանելով և զլսելիս սրբազն Վեճին, ի ձեռն նոցին, թէ զիս բնա յերկիրն ին: Եւ սրբազն Վեճին տեսաւ թէ ոչ է իմիք պիտոյացու և զընկերն ևս ոչ թողացուցամք միամուութեամբ մետսիլ գործոյն, վասնորդ յոյլ ևս նմա զնաւ, զոր և յեկա ի Կարս, և զրեաց Խրքամին Աֆանտուն, զի տարեալ ինը զիտեցաւ Բատառարիմ բարարի միոյ ուղևորեսց զնա ի մեծն Պօլիս, զի տարեալ հաստոց, առ պատրիարքն և զիր վարձն անդ առնուցու ի նմամէ»:

Անդ. Էջ 526—527

Թուղթ ևս առ Զարիկենց Գրիգոր աղայն գրեաց ի Մադրաս.... «Որպէս ի մարտի կը խոսացաւ նմա սրբազն Վեճն զկատարեալ որպէսն թղթաշէն ֆրանկացն յատոյ գրել իմբ-նամ, ըստ խոստմանն իրոյ ամա այժմ գրեաց, զի երկորին թղթաշէնը (որոյ միոյն անոնն Յովսէփ էր և միւսոյն Ցովիսանէն) ըստ խմբորց Մուսի մլաշին և առ Գրիգոր աղայիս, և զիտութեամք մուսի Կելյոյին ի ՌՀՀԴԴ թուղթ (1774) Փրկչին և յապրիին եկնալ յերկուն լիրանց, ի այն թուղթ և ի վիտորը, ծԳ(18) եկնալ մտին ի ս. Աթոռու, և ճանապարհի խաճճ բատ լատինացց Բաշտին մինչն ի Պօլիս եղել էր 1874 լիտն, որ ըստ մեր Բաշտին լինի 920 դուռ: Եւ ի Պօլիս 600 դուռ թաթարին էին տուեալ, որ երեր զնոսա մինչն ի Կարին: 422 դուռ ևս իրեանց էին խարճնալ: 200 դուռից չափ ևս իՊօլիս՝ ազանելոյ, ձիոյ, այսրի և այլ պիտանեաց էին խարճնալ: ԳԾ(300) դուռից չափ դրաս խարճնաց վասն նոցա, մինչն ի Կար-սայ ընթել ևս զնոսա ի ս. Աթոռու»:

Բացի այդ Կայողիկոսը նորից վճարում է ծախը 1550 դուռուց, ապա վճարում է երկուսի ունիկը 1550 դուռ և հագնելիք ու ուսելիք պէտք է վամբը տար նմա:

«...Անս ի գարուն ի մարտ ամսոյն սկսալ զբարիխանաց և զալ տունսն և զգործին շինցուցամեն: Տակալին չեն աւարտեալ: Մած տունն մէկ մնձ եկեղեցու չափ կինի, տաշ-եալ բարամբը և կրով: Նրկանութիւնը Խ(20) գագ է և լայնութիւնը Թ(8) գագք:

Անդ. Էջ 418—19

սուած չի գնում: Սիմեոն կաթողիկոսը խիստ մեղամալով, հասկանում է Երանց խարեւայությունը և վարպետներին կանչելով՝ գործ է պահանջում: Այդ ժամանակ միայն վարպետները խոստովանվում են, որ ուստեղ էին իրենց արթեստ ոչ ոքի շուրջությանը: Կաթողիկոսը ստիպված է լինում փալախար բե-

ի Թիֆլիզ՝ առ Թաղոյանց աւ. Մկրտչում պատուիր, զի՞ բղբատանց աղազա Բ(2) փայտատաշ խառաս յինցէ: «Թուղյ գրնաց սրբազն Վեճն ի Թիֆլիզ առ երեցինան աւ. Մկրտչում» ի պատախանի թիվոյն, զոր ընդ Թասալովի Յարութինին բիեալ էր: Եւ գրնալ էր սրբազն Վեճն թէ՝ ամս Բ(2) խառաս ի պատրատի կան, եթէ կամիս՝ բեցից: Գրեաց՝ զի փութով Բ(2) փայտատաշ խառաս յինցէ: Վաս այն շարիաքաջ խառաս ոչ խնդրեաց ի նմանն, զի թղթաշնչն ֆունկաց գործոյն փայտատաշ խառաս էր պիտոյ, այժմ»:

Անդ, էջ 481

1777 թ. նոյն, 28 մեծ թղթաշնչն մուսի Բէյսոնց էլ վերադարձաւ Յարմսիա: «Զի որովնեսու ասէ, ամօգուս էր նմանն ողցա ասու, և յիրեանք ևս գնազ կամեցան, վասն այսօրիկ ամա թեցաք» գրու է Պոլիս Զարարիա վարդապետ պատրիարքին*:

Ի Փարէզ, ի Մարշիլիա, ի Հնդիկս, ի Պոլիս, ի Կարին, ի Կնարիա և ի Կարս.

«Ազ որովնեսու ամս երթայր թղթաշնչն, ...վասն որոյ զուույս գրնաց ի Մարշիլիա առ Շամիրմաննեան Մարգար Աղայն, և ծանոյց մեա զգելն յառաջ ի յապրիլի ԺՈՒ (18) զուույս, ևս և Դեկտիմին և Գրիգոր Աղայն, և յենին առ ինքն ի վերալ Պոլսոյ: Խոկ և այժմ ծանոյց սմա ցղելն Բ(Արկոյ) թղթաշնչն փունկացն միոյն յառաջ ի նուկումքերի 1.Ը(28) և միոյն յեկումքերի 6: Բայց, ասէ, վասն յիրոյ նենցաւորութեան, մնաց մինչ ի յունուար ամսոյն ԽՈՒ(29): Այլու որպէս ի դեկումքերի Զ(6) առ Գրիգոր Աղայն, նոյնակս և այժմ առ սա՛ գրնալ ծանոյց զամենայն նենցութիւնս թղթաշխնացն, որք նենցաւոր մոր ոչ նամին զլաւ բուույս, և ոչ ուսուցին զաշակերտսու, և զիեց տարույ վարծս խարեկին, և այլ զոր ինչ շարութիւնս արարեալ էին՝ ի կարծոյ ծանոյց: Եւ թէ որպէս զերից ամաց վարծս երկուցն ես լրի, թէպէս Լ(30) ամիս էր, դու եւանելոյն երկրէն յիրեանց: Սիոյն ԲՈՒԾ(2700) դոոչ և միոյն ԱՐԾԾ(1800) դոոչ, նանդերծ զարու և զնալու բոյոր խարճովն նանապարհական: Եւ զար ամենայն բան նոցին լրի ծանուցեալ՝ զայս գրնաց ապա, զի Դեկտիմ ծանուոց զայսուիկ: Քանզի մեր, ասէ, ի պատճառս ողցա մինչ ի ԺԶԾ(16.000) վնաս կրեցար, և ի ողցան մէկ օգոստ շտուար: Ասա, զի վասն Աստուծոյ դատաստան արացէ, զի աստ մեր խօսեն անպատշաճ էր:

...Նուկ և որպէս ի վերն առ Մարգարն և Դիվիսն Գրիգորն, նոյնակս և առ սա Զարարիա վարդապետն գրնաց զննացաւորութիւն թղթաշխնացն:


...Մանաւանդ այսր նոր զնացող մեծ թղթաշխնիս, որ խարեաց զմեզ թէ՝ մինչև զփորքը ոչ յիցելք, ևս ոչ կարեմ լաւ բուույս Բանեն, և յորման միցաք, մկան ասել թէ՝ ինձ ձեռագիր տուր, որ վեց տարույ վարձ տայր ինձ և ես լաւ յուույս Բանեն և աշակերտ ուսուցանեն, և երբ զերծանիմ, զնամ շուտով: Եւ մեր ասացաք, թէ շնորհն ցոյց մնաց տեսցուր և ապա զարդարիս բանաւաս. Ես մկան նոր բուույս Բանեն, բան զառաշինն վատքար և անպէտ: Որով և մեր զգունալ՝ այլ ամօգուս տեսաք զմնակն ասու, և լիցաք. բայց շնորհօքն Աստուծոյ մեր տղայրն ման զդուա լաւ բուույս Բանենց են: Յապ երկու տարիս, ասէ, այդ խարեւայր յամենայն գործոց մերոց զմեզ արգելին, բացի վճարուցն, զոր յասոյ գրելոց եմ, ամէ»:

Անդ, 8-րդ մաս, էջ 17—21

«Թուղյ առ Շամամիր Աղայն, դարձեալ նոյն՛ որ ինչ ի մայիս ԽՈՒ(29) նանդերծ յաւելուածովն, որ ի յունիսի ԺԲ(12): Եւ այժմ այս աւելի, զի որպէս յառաջ ի յունիսի ԺԲ(12): Մարտունաւ Յալմէկի Աղայն ծանոյց զվերշին մեծ թղթաշնչն ֆրանկին, որ վեց տարույ վարձ յանդելոյն ասա լրութիւն արար, և վերջապէս Բանանցան Գ(3) տարույ վարձ առուու և գնացեալ ի Պոլիս, անդ ևս զնոյն լրութիւնն արարեալ էր և վեց տարույ վարձ յանդեւու և նորս չենց տուեալ, ուստի միայն զնանապարհի ծախս առեալ ի պատրիարքի՛ն ի Պոլսոյ մինչև յիր յերկրին ԲԾԾ(233) դոոչ, ելեալ զնացեալ էր անդ: Ասու ևս որ ի մէջ ԱԾԾ(150) դոոչ էառ, ի կողմանէ վարծուն, և ի Կարս առեալ էր ԱԾԾէ(117) դոոչ՝ վասն ծախսուց նանապարհին և տանու բաթարին, մինչև ի մեծ Պոլիս, զայսուիկ ևս ծանոյց»:

Անդ, էջ 198

* Դիվան Հայոց Պատմութեան, գիրք ԺԱ. Սիմեոն կաթողիկոսի Յիշատակարանը, մասն 3-րդ, վերջին, (1777—79, Թիֆլիզ, 1913, էջ 15:



«Գիրք Ալութից որ կոչի գրոսարան Հոգևոր»-ի տիտղոսաթերթը. ս. Էջմիածին, 1772

թել տալ նրանց պատմելու համար: Միայն այդ ժամանակ վարպետները վեց ամիս ժամանակ են խնդրում բուլթ շինելու համար և իրենց հանձն առած բոլոր գործերը կատարելու: Սիմեոն կաթողիկոսը զիշելով նրանց ուզած ժամանակամիջոցը շնորհում է, բայց միևնույն ժամանակ նրանց վերա հսկող է:

Վասն թղթատանն բուլթ հասարակ՝ տալ զշրոամին:

«Են զի վասն թղթատանն աստ զնտանիր ըստ բարկանին շորամին՝ ի բթամէ կամ ի բամբակէ՝ յորոց լիներ բուլթ, և ժողովելն ասոն և անտի՝ եր յոյժ դժուարին և անձեռնեան: Հի դրամով զնով ոչ լիներ, և այլ ինչ կերպ և հնար չզնտանեաք: Ուստի, այժմ զայս զուար հնար, զի Կիրեկ անուամբ դերձակ ոմն յինցաք, կա՞մ դրամով, կա՞մ այլ ինչ դիրաձնոն հնարից ժողովել զշրոամին վասն թղթատանն, և թերեկ ասու: Որ գնաց այժմ ի կողման Ականակերտու, Բասնու և Ախալցխայու և Կարսայ, և այլ նոցին մերձակալից: Վասն որոյ գրեաց ևս ընտ սմա զթուլք օրմնութեան հասարակապէս, զի ուր և հանդիպեսցի, օգնութին արասցին, տալով զշրոամին, վասն թղթատանն առ ի լինել միթ բոյտոյն: Ցնտ ապր ի յօշական զնացաք ի յալայ ի լունիս ժէ(17):»

Ե. Գ. Ը. Բ. Կ. Վ. ՓՈՂՔՐԻԿ

Յ արակիւսեցեալ ՚ի Այստօնէ
մըբազսն Ավմուղիկոսէ Հայոց
յայլեայլ ժամանակս :

Դարձեալ մի-բարին տպագրեցնալ ՚ի սպառիլ
առաջնոց տպագրեցնացն . ՚ի Բախոնչանոց
օկրագարք խնդրաշաց :

՚ի վեհափառ Հայրապետութ Տն
՚ի ուկասու սբըն Ավմուղիկոսի
ամ Հայոց , և նորին խակ հրամանաւ :

Ե՞՞ ՚ի հանուրք ,	Ա չ դգ :
՚ի Բանականի Հայոց ,	Ա մ խթ :

Ի Ս Բ Ե Լ Հ Զ Մ Ի Ա Ծ Խ Ե Ւ

՚ի տպարանի սբյն Պարիշորի |
սահորչին մերոյ :

I

«Տաղարան փոքրիկ»-ի երկրորդ տպագրության տիտղոսաթերթը. ս. Եջմիածին. 1793

Կարգում Խասիակ եախսկոպոս Գեղամյանին, որի նոգացողովյամբ կարծ
ժամանակում թե՛ թղթաշինության գործարանն է պատրաստվում և թե՛ տպա-
րանի համար թուլյ է հասնում 1775 թվին*:

Սիմեոն կաթողիկոսը նոր շինև տված թղթով առաջին անգամ տպել
տիեց յոր Պարտավճար գիրքը, որի մի օրինակն ուղարկեց Գրիգոր աղա-

* Դիւն Հայոց պատմութեան, գիրք Գ, Սիմեոն կաք.-ի Ցիշառակարանը, Թիֆլիս,
1804: «Ազգապատում», Բ նու., Ա. Պալիս, 1914, էջ 3101:

ին և հայտնեց, որ ամրող գործարանի վերա ծախը է եղել 7800 թուման: Գրիգոր աղան տեսնելով յուր պրտարուխ նվիրաբերության անդրանիկ պատուից, վճարում է ամրող գումարը, ողարկելով կաթողիկոսին իրեն շնորհակալություն 400 զուգ ըմպանակներ, որոնց վերա գրված էր ուկեգիր հայերներ տառերով՝ «Ե՛ բարի վայելս Սիմեոն կաթողիկոսին, ի ՌՄԻԶ (1777) նայոց բուին»:

Սիմեոն կաթողիկոսը մի որիշ լոլրով էլ թղթաշեն վարպետների խարեւայության մասին է պատմու Գրիգոր աղային, ավելացնելով, որ շնայած դորան, թե նրանք իրենց պայմանը չկատարեցին և աշակերտներին ոչինչ չսովորեցրին, այնուամենայնիվ նրանց հաջողվել է թողթ շինելու արթևար հականակ և ավելի լավ են պատրաստում, քան վարպետները: Նովն գրության մեջ հիշում է, որ թուղթը շինված է Էջմիածնի անվամբ և նշանարանով, խոստանալով, որ ինչպես տպագրատան, այնպես էլ թղթատան ճակատին գրել տաղ Գրիգոր աղայի հիշատակը: Ինքը Գրիգոր աղան անգիտեացից թարգմանված մորթակներ է ողարկում լեզուն սրբագրելու և տպագրելու համար, որը և կաթողիկոսը կատարում է ուրախությամբ: Միննոյն ժամանակ հայունում է նաև, թե ի հիշատակ այդ մեծ բարերարության Գրիգոր աղայի, Զօռապան և Տօնացոյց գրքերը ձրիապես բաժնենել է բոլոր եկեղեցներին:

Ս. Էջմիածնի թղթագործարանում պատրաստված այս թուղթը բոլոր թերթերի վերա ուներ որոշ նշան, թերթի մի երեսի վերա տպված էր և Էջմիածնի անվան շրանկար փակագիրը, որի տակը կար նաև երկու տառ Ս. Կ. (Սիմեոն կաթողիկոս), իսկ թերթի մյուս երեսին տպված էր բարեկարի անվան սկզբնատառերը՝ Գ. Մ. (Գրիգոր Միքայելյան) և թղթաշինության գործարանի կառուցման հայկական թվականը՝ ՌՄԻՆ (1776):

Սիմեոն կաթողիկոսը 1774 թվին տպեց յուր պատրաստած Տօնացոյցը, որ յուր անունով էլ կոչվում է, որովհետո ինքն էր կարգավորել և երկու հատորի բաժնենել: Վերջարանի մեջ հիշում է, թե՝ Էջմիածնի տպարանի համար ինչ մեղություններ և քաշել և թե՛ ինչպես մետքնենու զարգանում ու ծաղկում և բարգրության արվեստը Էջմիածնի տպարանում:

«Անա հինգ ամ է,—ասում է նա,—յորս աշխատիմք և տքնիմք զի զարմատու զայս ի ձեռն թերցուք և հաստատեսցուք ի սուրբ Սրբություն, զոր և հաստատեցաք իսկ Աստուծով: Յորում տպեցաք նախապես զքանի նատ Սաղմոս, որ գտնասութիւն շատ ուներ Ալատմամբ տպեցման: Երկրորդապէս տպեցաք զփոքրիկ Գիրքն Աղօթից և ևս փորձելոյ աղաքաւ զպարագայս գործոյն, որ թէպէս հասուն էր քան զՍաղմոսն, սակայն ևս ուներ գտնասութիւնն ոմանս՝ որքան առ գործս այս: Ապա երրորդապէս տպեցաք զՏօնացոյց զայս, որ Աստուծով քան զնոսա հասուն է և կատարեալ»:

Սի քիշ նետո շարումակում է.

...«Ե՛ մարդոց պիտանեաց ունիմք զմեծ սովս. գտանեցեալքն ևս անկիրթ և անյարմարք զնիւթյոց հարկաւորաց և զայլոց պարագայից գործոյս ոչ զմի ունիմք առձեռն, այլ՝ զամենեսեան ի հեռուստ վայրաց թերեմք մեծաւ տաժանմամբ և տաճանապատիկ ծախիթը: Եւ զայնս ևս ի յառ ձեռն թերելն մեր որպէս և իցէ, անդէն մրրկածին ժամանակն, և կատաղի ժամանակաւորքն որք զմեօք՝ միջարեկ առնեն զմեզ և խափանեն զյառաշաղրեցեալ կամս մեր»:

Յոր գրած հիշատակարանում Սիմեոն կաթողիկոսը չի մոռանում հիշելու նաև «զիսահակ եպիսկոպոսն Գեղամացի, որ յամենայնի կարգաւորիչ և տնօրինիչ է գործոյս և գործավարացն սորին, անձանձիր աշխատեցմամբ»:

Հնդումին և զտիրացու Յարութիւնն Էջմիածնեցի, որ է փորագրօն և քանդակով բոլորից գրոց, պատկերաց, խորանաց, կանոնաց և ծաղկան, նաև տպօղ գրեցու...: Արժանի է յիշման և Շոօթեցի Մկրտիչ առքեալիուպոսն, որ իր ու նախակին հեղինակ եղև գործոյս այսորիկ՝ որքան առ փորագրութիւնն ի պողովատեալու...: Գրիգոր Աղայն ջուղայեցի ի Հինդ բնակեալ... Խօջազանեան Չաքիկենց... քանզի գործ այս բոլորովին պարագայիք և բնաիր ծախիրն վերոիշեալ բարեպաշտի... յատաշանայ ճրիապէս»*:

Սիմեոն Կաթողիկոսի հորինած **Տօնացույցը** կրոնական պառոկերներով զարդարած բավականին մաքրու տիպ էր: 16 մու 564 երես: **Տօնացույցի** լուրս թերթած հիշատակարանից պարզապես տեսնվում է, որ պատկերներ փորագրողը, տառեր շարողը, և ցրողը-տպողը և մուր քսողը, սրբագրողը, պատկերների և այն փորագրողը, մի խուրով տպարամի մեջ աշխատող բոլոր անձինք եղել են և Աջմիածնի միարաններ, եպիսկոպոսից սկսած մինչև Վերջին դպիրը. և «սա ապացուց է տպագրական գործի կարևորության նշանակություն տալուն և միարանների միահամուն ուժերով գործի հաջողությանը նվիրված լինելուն»**:

«Տոնացույցի հրատարակությունը կրոնական-քաղաքական նպատակ ևս ուներ, այդ տոնացույցի գործածությամբ պետք է հայերի միջից վերանար կաթողիկությի տպած և հայոց եկեղեցու տոները աղավաղած Տօնացույցների գործածությունը և երկրորդ՝ Սիմեոն Կաթողիկոսը հրավիրում է եկեղեցու հուրազատ զավակներին զգուշանալ, ոչ այնքան այլադավան օտարազգի բրիտանյաններից, որքան ավելի պետք է զգուշանալ նենց հայերից, որոնք իրենց եկեղեցին թողած՝ օտար դավանությանց են դիմել և ներքուստ ոխերիմ թշնամի դարձել, որն ավելի վտանգավոր է»***:


Սիմեոն Կաթողիկոսի կազմած նոր Տօնացույցը, որի մեջ խիստ կերպով դատապարտում էր կաթողիկ կղերին, առիթ է լինում, որ Կ. Պոլսի հայերը 1786 թվի սեպտեմբերի 3-ին արգելքի տակ են դնում այդ Տօնացույցի գործածությունը: «ՈՒՄԼԵ—1786 սեպտեմբեր 3: Յայս թուականիս կատարելապէս արգելին գգործածութիւն սրբագրեալ Տօնացույցին և զհնգեսին Կիրակէն»****:

* Տօնացույց, ...աշխատութեամբ տեսան Սիմեոնի կաթողիկոսի, ՌՀՀԴ, Էջմիածին, էջ 554—564: Նաև Դիման Հայոց պատմութեան, որտեղ Գ. թիմ. Աղամյանը անում է մետաղայ դիտողությունները այս մասին. «Որովհետև Բայոց եկեղեցական Տօնացույցը Բայոց շարժական տարվա վերա էր Ամենված և այդ պատճառով տոների կատարման ժամանակի մ.շ շփոթություն էր առաջ գալիս, ուստի և անմիամեջ էր Ամենավորապես բարեփոխել Տօնացույցը, և այս մեծ գործը կատարեց Սիմեոն Երևանցի կաթողիկոսը ԺՀ դարի երրորդ քառորդում: Նա մոցրեց անշարժ տարին եկեղեցական տոնակատարության մեջ, հաստատուց 582 տարվա Մշոնչենական շրջանը և մոցրեց տոնելի սրբերի շարքը Հայոց եկեղեցու նըշանավոր հայրեր Հովհանն Որոտնեցուն և Գրիգոր Տաթևացուն նկ այդ նորոգված Տօնացույցը Սիմեոնը տպեց իր բացած պատման մասին, Եղիշիս իր շինած թղթագործարանի վրա, բայց որովհետև վերջիններս ուժգին կերպով մաքատկ էին կաթողիկության դեմ, ուստի և լատինամիտ հայերի քելադրությամբ Պոլսի հայերը մի առ ժամանակ չգործածեցին այս բարագրված Տօնացույցը» այլ Բնովին վարում էին եկեղեցու ժամակարգությունը, բայց տաճականաբեր շուտով զգացին իրանց բոնած անմարմար դիրքը և սկսեցին գործածել այն: Տես նաև Դիման Հայոց պատմութեան, գիրք Ժ, Մանր մատնագիրը, ԺԵ—ԺԹ դար, Թիֆլիս, Թիֆլիս, 1912, էջ 556—557 (ծանոք. 124):

** Ակերս. Երիցան, Պատմական տեսություն նայ տպագրության, Տիֆլիս, 1879, էջ 25:

*** Ակերս Երիցան, անդ, էջ 26:


**** Դիման Հայոց պատմութեան, գիրք Ժ, Մանր մատնագիրը ԺԵ—ԺԹ դար, Թիֆլիս, 1912, էջ 463:



Սիմեոն Երևանցու «Տօմացոյց»-ի երկրորդ տպագրության տիտղոսաթերթը. Կ. Պոլիս, 1799

Անա այսպես Սիմեոն կաթողիկոսի եռանդուն ջանքերի շնորհիվ ս. Եջ-
միանի տպարանը օրուսորեւ ծաղկելով, շարունակում է գրքեր լուս ընծա-
լել: Խնչվես հիշվեց առաջին տպագրածը Զքոսարանն էր, Բևոռ՝ մի Տաղա-
րան երկրորդ տպագրությամբ 1777-ին: Նովն թվին տպվում է նաև Կարգ
թադման Հայրապետաց, Եպիսկոպոսաց, և քահանայից Մաշտոցը, որի հի-
շատակարանում ասված է՝ «զոր ի բուն Մաշտոցէն մերմէ առեալ սրբագրեալ
և կարգադրեալ Տեառն Սիմեոնի գերերշանիկ և գիտնական կաթողիկոսի

ամենայն նայոց, ես տպագրել մեծաւ գգուշութեամբ ինքնին իսկ լինելով վերակացու»: Սույն գիրքն ունի խորհրդավոր փայտափոր պատկերներ Մասիս սարի և հայրապետական Աթոռի, որոնք արևելյան բոլոր նայ տպագրությանց մեջ գտնվում են:



Ս. Էջմիածնի թղթագործարանում պատրաստված թղթի դրոշմը
Միմեռն կաթողիկոսի և Գրիգոր Միքայելյանի անվան սկզբնատառերով

Միմեռն կաթողիկոսի հիմնած տպարանում գործելիս են եղել երկու նաև ձեռքի մամուլներ: Հայտնի չէ երբ են այդ մամուլները գործածությունից դուրս եկել, նավամականորեն երբ նոր կատարելագործված մեքենաներ են ստացվում, Միմեռն կաթողիկոսի ձեռքի մամուլները մնում են անգործածելի և անուշադրության են մատնում այն մամուլները, որոնց տակից Էջմիածնում առաջն գիրքն է լույս տեսնում: Հետագայում անփութության և անհասկացության շնորհիվ այդ մամուլների տախտակները տգեսու ձեռքերով կուրտվել են և միայն երկու մեծ պտուտակներ էին մնացել, որոնք անհայտության մեջ են և միայն 1910 թվին գտնվելով՝ Հնությանց թանգարանում դրվեցին*:

* Այս երկու պտուտակները տողերին գրողը՝ վարպետ Ալեքս. Ղարախանյանի մեջ, 1910 թվին փնտրելով գտավ և թանգարանում դրեց իրքն մնաթյուն:

Սիմեոն կաթողիկոսը վախճանվում է 1780 թվին և նորա մարմինը ամփոփում նեն ս. Գայանեի վաճքի գալթի արևմտյան պատի տակ: Մարմարյա գերեզմանաբարի վերա կա հետևյալ արձանագրությունը:

«Քրիստո Աստուած իմ Տէր բարի,
Լոր աղետից քոյս ծառայի.
Դու կացուցեր զիս յաս կարգի,
Ի մշակել ըզքը այգի.
Եսկ ես անուամբ այս պաշտօնի
Գտայ ծառայ ամենայնի.
Եւ որպէս թէ զպարտառը մի
Փոխաստուաց զիս մատնեցի.
Ոյց եսու և ծառայեցի,
Վարձն իմ զսուգ և զժաւ առի.
Այսու կենօր ողորմելի,
Ժամանակս իմ վճարեցի.
Այժմ ամօթով կամ առաջի,
Զի ծառայել քեզ չկարացի:
Արդ, դու նայեաց յիս քաղցրութեամբ,
Թող զյանցանս ներողորթեամբ,
Ուրախացո՞ւ առ Քեզ կոչմամբ,
Եւ սիրովեա՞ Քո սուրբ տեսլեամբ.
Վասն խաչիդ՝ զոր պաշտեցի,
Եւ սուրբ անուանդ՝ զոր կրեցի.
Սիմեոն կաթողիկոս Երևանցի,
Ի ՌՄՌ թոփ և յուլիս 26-ի
Ի վարդապատ կիրակէի»:

Ժ.

ԺԸ դարի վերջին քառորդին և ԺՄ դարի սկզբներին Հայաստանը ալեկոնձած ծովի էր նման: Մի կողմից պարսկի իշխողները և վրաց Երեկի Պարսկի կովի էին դուրս ենել և իրենց հաշիվները Հայաստանում էին վերջացընուն: Մյուս կողմից Սովորանու թուրքերն էին ասպատակում երկիրը և ժողովրդին թալանում*: Այս շրջանում Էջմիածնում և նրա շրջակայրում միայն բռնությունն ու թալանն և Բաղաջանքներն էին թագավորում:

Դեռևս Սիմեոն կաթողիկոսի կենդանության օրով Երևանի խանը և նորա աներ Սովորան քուրդը վրաց Հերակլ թագավորի ներ ունեցած պատերազմների պատճառով մեծամասն չարիք հասցրին ս. Էջմիածնին և շրջակա զյուղերի հայ բնակչներին:

Դուկաս կաթողիկոսի ընտրության առաջին տարին ևս շարունակվեցին նոցա պատերազմները, որոնց հետևանքով Արարատյան դաշտի շատ գյուղեր ավերվեցին ու գերի տարվեցին բնակիչները: Անա այս աղետավի կոհիվների մասին է Դուկաս կաթողիկոս 1780 թվի դեկտեմբերի 5-ին ողբարով գրում Պոլսի մեծ իշխաններին, որտեղ նա ասում է.

«Գրեալ է ձեզ յառաջ հոգելոյս Հայրապետն մեր զամնայն անցսն անեալ ամէն. և ամա յայր է թուղթն, տեսէք թէ զինչ ցարք և վիշտք են տիպեցնեալ երկրին և սրբոյ Աթոռուս: Զի երկիրս ըստ մեծի մասին ի Վրաց տուն

* Դիման Հայոց պատմութեան, գիրք 7, Դուկաս կաթողիկոս (1780—1800), Թիֆլիս, 1809, Յառաջաբան, էջ հը—իթ:

վարեցեալ՝ տերեցաւ, և սուրբ Աթոռու թէ՝ ի օրաց անտի և թէ՝ յետոյ մանաւանդ ի մերկ և ի քաղցեալ մնացորդաց երկրիս՝ դատարկեցաւ ի գոյից, այսինքն թէ՝ ի յուտելեաց և թէ՝ ի խարճելեաց, որք և մինչև ցարդ դեռևս թէ՝ սիրով և թէ՝ ակամայ զիարելաւոր պիտոյ իրենանց ի մէնց խնդրեն և սունոն: Քանզի ոչինչ է մնացեալ յերկրոշ: Մինչև ցեղսն ամսոյն հոկտեմբերի, եկաց մնաց խոռվորթինն երկրիս որքան և արարին երթեւեկս վասն հաշտութեան, չեղն հնար»*:

Նույն դրույթունը գեղեցիկ կերպով պատկերացնում է Ղուկաս կաթողիկոսը 1790 թվի փետրվարին Բնդիկաստանցի Շահամիր աղայի անվամբ տված կոնդակի մեջ հետևյալ ձևով.

«Խսկ յաղագս մերոց զորախառիթ դիպմոնս ինչ ոչ ունիմք ի գրել, այլ զտրտմառիթ պատահմանց մերոց և կողմանց՝ բազմիցս գրեալ եմք և լուեալ եք և այժմ ևս գրեմք որ յանտիրացելում երկրոց միշտ կրեմք ըստ առաքելոյն, զպէսպէս վիշտու ի պէս պէս վշտացուցաց և մանաւանդ հոգք և ցարք մնացելոց վանօրէից, եկեղեցեաց և եկեղեցականաց մերոց կուտին ի վերայ մեր, քանզի բազում վանօրայք և եկեղեցիք կողոպտեցան և աւերեցան և մանկունք նոցին գերեցեալ ցիր ու ցան եղեն և ումանք՝ որք մնացեալք են, այնորիկ ևս օր աւոր կողոպտին և ուտմակոյն լինին»**:

Նույն կաթողիկոսը Հովսեսի արքեպիսկոպոս Արդությանին 1791 թվի օգոստոսի 18-ին գրում է հետևյալը.

«Եւ վասն գոնէտորիին և գոզէրիին և ննջաֆ քրքոցն գրեալ էիր թէ վասն եմ առաքեալ: Ցիրայի վաղապէս հասեալ են, որպէս առաջին թղթովն ազդարարեալ եմք քեզ շնորհակալութեամբ, սակայն սնջափն մէկ թուլում եք, շիմացաք թէ՝ պարոն Մկրտումն վասն է՞ր զերկու չեր յեւալ: Խսկ միմալու դութեցն աղագաւ որ գրես թէ ոչ գտանին այժմ, ապա զի՞նչ եմք առնելոց, յանդոգն առօղբն, որք ի վաղոց սովորեալ են առնող, այլ ևս պահանջեն»***:

Իրերի այսպիսի խառն ու դառն դրույթան մեջ որախառի մի երևույթ է Շներկայացնում Ռուսաստանի հայ գաղթականության մեջ սկսված գրական-տպագրական շարժումը, որի գույն էր կանգնած Սիմեոն կաթողիկոսի եռանդուն աշխատանքով ու նրա օրինակով Անդշնչված յուր աշակերտ Հովսեսի արքեպիսկոպոս Արդությանը:

Խնչպես որ Սիմեոն կաթողիկոսը Էջմիածնում գիր ու գրականություն տարածելու համար մեծ աշխատանք քափելով հնդկաստանցի Գրիգոր աղա Միքայելյանի օժանդակությամբ տպարան բաց և թղթաշինության գործարան հիմնեց, Հովսեսի արքեպիսկոպոսն էլ հեռու հյուսիսում նոյն եռանդուն ու ոգևորությամբ տպարան է հիմնում, որն և նորա մեծ գործերից մեկն է: Հովսեսի արքեպիսկոպոսը այդ նպատակի համար երկար տարիների գրագրություն ուներ Ղուկաս կաթողիկոսի և Ամստերդամի հայերի մետ Ամստերդամի հայ տպարանը ձեռք բերելու համար, սակայն այդ նորան չի հաջող կում:


Այդ ժամանակ նա մեծ աջակցություն է ցույց տալիս 1780 թվին ջուղայնցի վաճառական Գրիգոր Խալդարյանին, որ Պետերբուրգում տպարան է հիմնում: Այդ տպարանի տառերը Խալդարյանը բերում է Ամստերդամից: 1789 թվին Հովսեսի արքեպիսկոպոսը գնում է այդ տպարանը ամբողջապես և վո-

* Դիւան Հայոց պատմութեան, անո, էջ 62:

** Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ա—Բ, 1780—1884, Թիֆլիս, 1893, էջ 24:

*** Դիւան Հայոց պատմութեան, գիրք Թ, մաս Ա, Յովսէփ կաթողիկոս Արդության, մաս Ա, 1778—1800, Թիֆլիս, 1911, էջ 184:

խաղում է Նոր Նախիջևանի մոտ յոր հիմնած և. Խաչ վանքը, որտեղ բացել էր նաև մի դպրոց: Այստեղ տպարանը գործում է մինչև 1794 թիվը՝ հրատա-
րակելով մի շարք գրքեր: Սակայն եթե Հովսեսի արքեպիսկոպոսը տեղափոխ-
վում է Հաշտարիան, տպարանն էլ տեղափոխում է այնտեղ: Թե՛ և. Խաչի,
թե՛ Հաշտարիանի և թե՛ Խաղդարյանի տպարանում տպված գրքերը Հով-
սեսի արքեպիսկոպոսի հրամանն են կրում. Խաղդարյանի տպարանը ևս Հով-



Սիմեոն Երևանցու տպարանում գործածվող փայտայ մամուխ պտուտակը

և կին է համարվում, նորա ջանքերով ձեռք թերած ու բացված լինելուն հա-
մար: Հաշտարիանում նորա տպարանը գործում է: մինչև ԺԹ դարի առաջին
բառորդը, որտեղ տպագրվում էին հայերեն և ոռուերեն գրքեր ամեն տեսակի
թույլանդրակերպյամբ*:

Հովսեսի արքեպիսկոպոսի տպարանը շնայած յոր աստանդական վի-
ճակին, Ժ. թ. դարի վերջին գոյուրյուն ունեցող տպարաններից թեղմնավոր-
ներից մեկն է եղել: Այդ տպարաններում տպվել են հայերեն գրքեր թեև գրա-
քար լեզվով, բայց այնուն լուս են տեսել ոչ միայն կրոնա-բարոյական բո-
վանդակությամբ գրքեր, այլև պատմագիրներ և օտար գրականությունից
թարգմանություններ:

* Տե՛ս. Հայ գրքի տոմս, Թիֆլիս, 1912, էջ 108:



«Արգ թաղման կարգաւորաց»-ից մի էջ. ս. Էջմիածին, 1777

Հովսեփի արքեպիսկոպոսը մեծ ցանկություն է ունեցել նաև յոր տպարանում շրեղ ու պատկերազարդ Աստվածաշոնչ տպել: Այդ հրատարակության համար նա փորագրել է տախիս պղնձի վերա մի քանի հարյուր պատկերներ, մեծ գումար ծախսելով դրանց վերա, յոր հույսը Հնդկաստանից խոստացած գումարների վերա դնելով: Սակայն, եռք ինքը 1800 թվին կաթողիկոս անվամբ ուղևորվում է Կովկաս և Հնդկաստանից գումարների ստացումն էլ ուշանում է և մասավանդ ինքը Թիֆլիսում վախճանվում է, Հովսեփի այդ գեղեցիկ միտքը՝ Աստվածաշոնչ հրատարակել, մնում է անկատար,

իսկ նորա տպարանն էլ փակլում է և եղած կիշաները կորսույան են մատնովում*:

Տեսած ժամանակի անհապատ բոլոր այս պայմաններին և երկրի անապահով դրության, որի մեջ կուսուրական որևէ աշխատանք միայն մռունելի կարող էր, այնուամենայնիվ Սիմոն կաթողիկոսի հաջորդ Ղուկաս կաթողիկոսը, որ մի շատ գրասեր ու ուսումնաեր մարդ է եղել, չանք չի խնայում տիրող իշխանների բռնությունների տակ անգամ տպարանն ու թղթագրության շնորհ պահպանել, իսպան ավերումից ազատել և նոցա գործունեաթյունը շարունակել տալ: Հովհաննես եպիսկոպոս Շահնարարունյանը, թվելով Ղուկաս կաթողիկոսի շինարարությունները և առաջ քերելով արձանագրությունները, միշտում է, որ սեղանասուն են տեղափոխում տպարանը:

«Չի յառաջին խոհանոցն՝ որպէս գրեցաք, փոխադրեցին զգործարանն տպագրութեան: Ի սեղանասուն: ասուի մտանեն ի սեղանատունն ձմուան ընդ երկու դրուն, իսկ ի միջոց այսոցիկ երկու շինուածոց՝ տպագրատան և սեղանատան, է սրա կամարայարկ... և արձան լիշտակագրութեան շերմանանդ նորիանացն և անուան նորա և ազգանոցն դնի արտաքուստ ի կամարի մեծի դրանմ՝ որ ընդ մեջ տպարամին և սեղանատան»**:

Թե՛ Ղուկաս կաթողիկոսը ևս մտադիր է եղել ըստ հնարավորության չանք չխնայել տպարանն ու թղթագրությանը շնորհ պահելու,—հակատակ Մսեր Մսերիանի մեջադրության***, երկում է նորա 1781 թվի հուլիսի 12-ին Ախալցխայի ժողովրդին ուղղած գրությունից թղթագրությանի համար հին շորեր հավաքելու:

«Ժողովը առ միաբնադրաւան ժողովուրդն Ախալցխայու, վասն տեալ արդեանց իրենաց, օրհնութիւն և շնորհակալութիւն և պատուի՛ մնալ ի հարազատութեան և կալ շերմեռանդ և հաստատուն ի հաստատուն սուրբ Հայատանեացս եկեղեցոյք»:

Այս գրության մեջ կաթողիկոսը ասում է, որ ամեն տեսակի արդյունքներն Մայր Աթոռոի նվիրակին տան և ավելացնում է.

«Եւ որ ինչ արդիւնք իցնեն սրբոյ Աթոռոյ՝ թէ գանձամակ և թէ այլ ինչ՝ ամէնն պարտին ձեռամբ դորին ժողովել և ի սուրբ Աթոռ հասամել: Եւ ննուսի շոր եւս, որ ինչ վասն թղթաշինութեան ժողովից՝ զայն**** ևս դա պարտի յիել աստ. և դուք սիրենիր մեր պարտիր յօժարութեամբ տալ զինուտիս, որքան և կարիցեք որ ձեզ չէ ինչ ծանրութիւն, իսկ թղթաշինութեան սրբոյ Աթոռոյն է մեծ ձեռնտութիւն և ձեզ պատճառ բարեաց վարձուց ի Տեառնէ»*****:

Նույն նոյիի մեջ կաթողիկոսը օրհնելով ժողովրդին հօգուստ Մայր Աթոռոի տված նվիրների համար, ասում է.

«Ուրք այժմ ամենայօժար սրտիք և առատութեամբք շնորհեալ էք հաստոյ մօրս ձերոյ սրբոյ Աթոռոյս զիհնագ թիլամի մում Ա(1) թիլամի և կէս մաղը, Բ(2) թիլամի ձիթապտուու և Ա(1) հակն զոր յաղագս թղթաշինութեան»*****:

* Դիման Հայոց պատմութեան, գիրք թ, ան, էջ 487—500:

** Հոգին, եպս. Շամիաթումյան, Ստորագրութիւն կաթողիկէ: Էջմիածնի, Բատոր Ա, 1842, էջ 102:

*** Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի, ի Սիմէօն մինչ ցթովրաննէս Ը, 1768—1881, ի Մոսկով, 1876, էջ 5—18:

**** Ըսդգծումները մերը են: Ա. Ե. Վ.:

***** Դիման Հայոց պատմութեան, գիրք Դ, էջ 91:

***** Դիման Հայոց պատմութեան, գիրք Դ, էջ 80:

፩፻፭፯

九〇四〇

THE SOUTHERN

1. Ապրիլ 8-ն Ամերիկայի վայակուն և ցու
շահիր Կաթու գեկոտի, մեծադար
և յոշներախոս Հայրապետի ամ Հայոց
քրիստոնեաց. ի. Ռատակին ոք. 1. Առան
| Գլուխածին :

Հաստատութեք Խրենը թէ միա
ըստովահամար Համատոյ սբ և կեցւոյն
Հայութաման ազգ և կայութապահ իւ մէ^ր
բոց ինուրին թայ անշեղութէ և :

၂၁၇၅ မြန်မာရုပ်ပိုင်ဆောင်ရွက်သူ၏ လုပ်လုပ် လုပ်လုပ် အလုပ်အရေး

१०८ अधिकारी उपर्युक्त लोकानामांकन

¶ תְּעִירָה יְהוּנָה יְהוָה תְּבִרֵךְ
¶ וְתַּבְרִךְ יְהוָה יְהוּנָה יְהוָה תְּבִרֵךְ

1. բայուղանի սկզբ 1) արդ գործ 1 շահապահ

• 186-19 1975/5/11 ,

W. L. Mulligan, D.M.D.,



«Պարտավճառ» գորի տիտղոսաթերթը, մ. Էջմիածն, 1779

Թեև թղթի գործարանը երկար չի շարունակել յուր գոյությունը, սակայն տպարանը յուր գործունեությունը շարունակել է Ղուկաս կաթողիկոսի օրով ևս տպագույք մի քանի հրատարակություններ, որոնց մեջ աշքի ընկերող Սիմեոն կաթողիկոսի սեփական շարադրություններ են եղել:

Այս հրատարակությունների մեջ է նաև Սիմեոն Կաթողիկոսի, Պարտավճարը, որի 9 տպագրական թերթը լույս էր տեսալ դեռևս մեղմակի կենդանության ժամանակ: 1784 թվին տպվում է Խաչկա իշխանի ծախըռվ Ժամանությունը, 1787-ին Յովսէփոս, 1791-ին Չուղացեցի Հոհաննան աղայի ծախըռվ Զեռաց շարական և Մաշտոց: Բացի այս հայունի տպագրություններից՝ հայանականորեն եղալ են և որիշները, որոնք անհայտ են մնացել:

Դուկաս Կաթողիկոսի օրով եղած հալածամբերն ու նեղորդունները չեն դադարում նաև Դավիթ Կաթողիկոսի օրով, որը Գաղատիա ուղարկված նվիրակի համար գրում է երեցփոխան Գրիգոր աղային հետևյալ հանձնարարականը.

«Քանզի ահա լուալ էք ի յարկէ, թէ զիմի հոգելոյս Դուկաս Կաթողիկոսի վախճանմանն և այսր որքան վիշտը և տառապանք և անմուն վեասր էին, որք ժամանեցին խղճայի սրբուոյս, թէ ի յօտարաց և թէ մանառանդ ի մերային ընտանեաց, ի փառամոլ որդոց սրբին որ և յաղագս պէսպէսեաց բազմապատիկ փորձութեանց և վնասոցն կրեցելոց պակասաւորեալ է խապահ ի յամենից կարևոր պիտոյից, ևս և ի չքատրութեան կայ: Վասնորոյ յամենայն սրտէ ձեռնոտ և օժանդակ լինելով նուրակիդ շամասցիս արդինաւորեկ զգործսն և խաղաղութեամբ հասուցանել յաւարտն ի յօգնութիւն յոգնադիմի պակասութեանց սրբոյ Գահիա»*:

Քաղաքական այսպիսի ծանր պայմանների մեջ Մայր Աթոռի տպարանից որևէ աչքի ընկնող գործունեություն պահանջել չէր կարելի: Այսուամենայնիվ, թեև յուր նախկին վայելչությունից զրկված, տպարանը պահպանվում է առանձին խնամքով ներածին չափ, և նա շարունակում է գործել և գործել լույս ընծայել:

Բայց թղթաշինության գործարանը, որ Էջմիածնի վանքի պարսպից դորս էր գտնվում, միանգամայն խանգաղվում է, որովհետև պարսից և օսմանցվոց միջանց դեմ կովկող գորքերը հափշտակում են երկարյա և պղնձյա գործիքները և տանում դնում են հեռավոր տեղերում. մանավանդ աղա Մահմադ խանի արշավանքի հետևանքով վակերմոնքը կատարելության է հասնում**:

Թեև ձուլված տառերի մի մասը, որ զինվորները տարել էին, հայազգի անձինք տեսնելով գերիվարների ձեռքին, կարողանում են ազատել և նորից Մայր Աթոռի տպարանին վերադարձնել, բայց մեծ մասը նոքա հալում զընդակներ և գորքերից էլ փամփուշտներ են պատրաստում**:

* Դիւան Հայոց պատմութեան, գիրք 1, մաս Բ, Դավիթ Կաթողիկոսի, - 1803—1804, Թիֆլիս, 1909, էջ 324:

** Թղթագործարանի կիսավեր շնորք մինչև վերջին ժամանակները գոյություն ուներ: Այդ շինությունը ժողովրդի մեջ հայտնի էր «Քիաղզանա (թոթի գործարան) անվամբ: Սույն շինությունից ակսած մի կողմից մինչև Գայանեի վանքը, մուս կողմից մինչև վանքի հարավային դարրասը պտղատու ծառերով լի պարտօնը է եղալ, որտեղ պատրաստելու նն եղալ թոթի զանգվածը: Այդ պարտեզը վաղուց գոյություն չունի, բայց աշուղական նրգերի մեջ միշտ լինում է: Օրինակ, Կարապետ անվամբ աշուղի մի ուսանակորի մեջ կարդում ենք.

«...Քիաղզանա բաղչի տակին մնկ փոսում փորդ թափած էր,

Մտիկ տոփի քարի տակին սիպտակ պմեղներդ բաց էր...»:

«Հայ աշուղներ» լոյս գցած աշխատամիտութեանվ Գեորգայ Ախմետիեան, Բրատարակությամբ օր. Մայթ Ախմետյանի, Թիֆլիս, 1903, էջ 86: Երջանկաթիշատակ Խրիմյան կաթողիկոսը լոի ամին նոր հյուրանոց շնմն տալով, նորոգել տվեց հյուրանոցին կից «Քիաղզանա» շնմքը: